

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՔՈՐ ԳԼԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վարկային պատմության եռթյունը

Վարկային պատմությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձի ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ամբողջությունն է, որը ցույց է տալիս վերջինիս ֆինանսական պարտավորությունների և/կամ դրանց կատարման պատմությունը:

Վարկային պատմության մեջ ներառվում են հարցման պահին նախորդող 5 տարիների վերաբերյալ տվյալները, և այն ձևավորվում է՝

- անձի ստացած ֆինանսավորումներից, այդ թվում՝ դրանց քանակից և գումարից, յուրաքանչյուր ֆինանսավորման գումարից, տեսակից, ժամկետներից, դրա գծով վարկատուի կողմից կիրառվող անվանական տոկոսադրույքից,
- ֆինանսավորման ապահովում հանդիսացող գրավների վերաբերյալ տեղեկատվությունից,
- վարկից բխող մարումների կատարման պարտաճանաչությունից (օրինակ՝ ժամանակին են վճարվել տոկոսներն ու մայր գումարը, թե՛ ոչ),
- այլ անձանց տրամադրված երաշխավորություններից, դրանց քանակից և գումարից, յուրաքանչյուր երաշխավորությամբ ապահովված վարկի տեսակից, ժամկետներից և գրավների վերաբերյալ տեղեկատվությունից,
- ֆինանսավորումների և երաշխավորությունների գծով ժամկետանց օրերի/գումարների առկայությունից, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժ ու տուգանքներից:

Վարկային պատմությունը չի պարունակում անձնական բնույթի տվյալներ:

Վարկային պատմության ձևավորման աղբյուրներն են ԱՔՌԱ անդամ կազմակերպությունները (բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, հետաձգված վճարումներով գործարքներ իրականացնող կազմակերպությունները, ինչպես նաև՝ հանրային տվյալների

բազաներից ՀՀ կառավարության սահմանած կարգով վարկային բյուրոյին անձանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրող պետական մարմինները):

Դրական վարկային պատմություն հնարավոր է ձևավորել վարկերն առանց ուշացումների մարելու, դրանք նպատակային օգտագործելու դեպքում:

Տարիների ընթացքում ձևավորված «Վատ վարկային պատմությունը» կարող է հանդիսանալ ֆինանսավորման տրամադրման մերժման պատճառ:

Վարկային սքոր գնահատականի եռթյունը

Սքոր գնահատականը հաճախորդի վարկային պատմության ուսումնասիրության հիման վրա ձևավորված վարկունակության և վարկարժանության թվային գնահատականն է, որը ցույց է տալիս՝ որքանով է հաճախորդը պարտաճանաչ որպես վարկառու: Եթե հաճախորդը երբևէ վարկ չի ունեցել, ապա վերջինս չի կարող նաև ունենալ սքոր գնահատական:

Վարկային պատմությունը բարելավելու համար իրականացվող քայլեր

Վարկային պատմությունը բարելավելու համար անհրաժեշտ է նախ շտկել այն վատթարացնող հիմնական պատճառները, մասնավորապես՝ հարկավոր է առաջին իսկ հնարավորության դեպքում արագ մարել գործող ժամկետանց պարտավորությունները, ինչպես նաև՝

- թեթևացնել վարկային բեռը՝ մարելով գործող վարկերը՝ մասամբ կամ ամբողջությամբ,
- մարումները կատարել սահմանված գրաֆիկին համապատասխան՝ բացառելով ուշացումները և ցուցաբերելով ճշտապահ վարքագիծ,
- նվազեցնել տրված երաշխավորությունները՝ կրճատելով դրանց քանակը, գումարը, ինչպես նաև առկայության դեպքում ապահովելով այս մասով ժամկետանց պարտավորությունների լրիվ մարումը,
- խուսափել անվստահելի անձանց համար երաշխավոր դառնալուց,
- խուսափել հաճախակի նոր վարկերի ստացման համար դիմումներ ներկայացնելուց:

Վարկային հարցման ազդեցությունը սքոր գնահատականի վրա

Հաճախորդի կողմից տրված համաձայնության հիման վրա՝ իրականացվում են հարցումներ «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Վարկային բյուրո)՝ վարկային պատմության վերաբերյալ:

Կախված թե հաճախորդը ինչ ծառայության դիմում է ներկայացրել՝ իրականացվող վարկային հարցման տեսակը կարող է ազդել սքոր գնահատականների վրա՝ հետևյալ կերպ.

Վարկային հարցման նպատակը		Ազդեցությունը սքոր գնահատականի վրա
Վարկառու	Նոր վարկային դիմում	մեծ հավանականությամբ նվազեցնում է
	գործող վարկի մոնիթորինգ	չի ազդում
Երաշխավոր անձ	Երաշխավորության տրամադրում	մեծ հավանականությամբ նվազեցնում է
	գործող երաշխավորի մոնիտորինգ	չի ազդում
Փոխկապակցված անձ		չի ազդում

Սխալ կամ թերի վարկային պատմությունը փոխելու համար կատարվող գործողություններ

Եթե հաճախորդի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով վերջինս կարող է այդ մասին տեղեկացնել Վարկային բյուրո կամ Վարկատուին, ումից ստացված վարկի վերաբերյալ վարկային պատմության մեջ առկա է սխալ կամ թերի տեղեկատվություն: Վարկային բյուրոյին տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում "Իմ ԱՔՌԱ" անձնական գրասենյակից:

Մանրամասները՝

